

ՇԱՀԵՕԼԻ

Շահ Եօլին Շահի ճանապարհն է. ըստ ոմանց Սուլթան Մուրատի գաղտնի ճանապարհն է, որ Ատրպատականէ, Խոյոյ և Մակուայ միջի լեռներէ կանցնի, կը մտնէ Ալուտաղ, կերկարի Պայազիտի հարաւային լեռներու գագաթից դէպ ի յարեմուտս մինչև Դիատինի մերձակայներն, ուստի կուզուի ի հիւսիս արեմուտս կտրէ, կանցնի Խիեկայ կետուկն, և Դիատինի արեւելեան հիւսիսից կը բարձրանայ Բագրեւանդայ հիւսիսային լեռնաշղթային գագաթն և շղթայի ուղղութեամբ լեռնէ լեռ կը ձգուի մինչև Դումա մերձ Տահար գիւղին, ուստի հարաւային արեւմուտք շեղելով կանցնի Բասեանի հարաւային լեռներու գագաթից, բին կօլի հիւսիսային կողերից, լեռնէ լեռ կը մտնէ Կարին:

Այս է հինն Շահ Եօլին՝ որ այժմ տեղ տեղ գործածելի է լեռնային ժողովրդոց համար:

Շահ Եօլին՝ որպէս ասացինք, ձգուած է միշտ այս շղթայի գագաթից, որ այժմ հետքը տեղ տեղ բաւրոյն կը մնայ և զտեսողս յապուշ կը կրթէ: Տեղ տեղ դժուարամտ չելի ժայռեր են պեղած, տեղ տեղ խիստ հակեալ կողերն են ճեղքած, տեղ տեղ ցած լեռներու գագաթներն են հարթած, որով կարելի արած են անհպելի սարերու գլուխներէն զինուորական պիտոյք կրել, անորգել երթեւեկել, բանակներ անց ու դարձ առնել:

Շահեօլին լինելու է Զամհանի ասած Պւշ եղեալ ընդ պողոտայն արքունի, հասանէր ի գաւառն Բագրեւանդ, ի գիւղն Բագուան, Որով կերելի որպէս զիրքն ևս ցոյց կուայ ժողովրդեան համար գործածելի չէր. այլ արքունական պէտքի միայն գործածուած էր:

Արարատեան նահանգի հարաւային շղթային վերայ, ուստի կանցնէր Շահեօլին, երթեւեկող բանակն ապահով շարժման մէջ էր ի հիւսիս երասիւր և երատիայ հովիտ մի ակնթարթով կը տեսնէր, ի հարաւ ամբողջ Բագրեւանդ, որով պէտք էր թշնամիէն

զգուշանայր և ցմիշտ պատերազմի համար յարմար զիրքի մէջ գտնուէր:

Թերեւս այս ճանապարհին շինութեան երկրորդ պատճառն ևս լինելու են Բագրեւանդայ ընդարձակ ջրերն, որ գարնան կառատանան, հուն չունին, շատ անգամ բանակի երթեւեկութեան արգելք եղած լինին:

Ըստ եղզի ժողովրդեան աւանդութեան, այս ճանապարհն շինուած է գաղտնի բանակ անցնելու համար:

(Շարունակելի).

Ս. ՀԱՅԿՈՒՆԻ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՆԻԵՐԵՆ ՊԵՐՏԲԱԶԻ ՄԵՍԻՆ՝



(Շարունակութիւն) *

Էրասմոսը: Սրա գործերի ընդհանուր գնահատութիւնը երեւում է այն մահարձանից, որ դրուած է նրա գերեզմանի վրայ՝ Բի'էրուս, որ գտնուում է Զուլիգարիայի Արգաու կանտոնում՝ Մոյհօֆի մօտ: Այդ մահարձանի վրայ գրուած է. «Այս տեղ հանգչում է Հէյնրիխ Պէտտալցցին, որ ծնուել է Յիւրիխում 12 յունուարի 1746 թ. վախճանուել է Բրուգում 17 փետրուարի 1827 թ. Նա է փրկիչ աղքատ երեխաների Մոյհօֆում, որտեղի հայր Ստանցում հիմնադիր ժողովրդական ուսումնարանի Բէրտուում և Միւնխէնրուքսնում սա է համաշխարհային կրթիչ Իվերդօնում, քրիստոնեայ, քաղա-

*) Տես նախընթաց համարը.

քացիի աշխատել է միայն ուրիշների համար իսկ իր համար ոչինչ չի արել: Հանգիստ նրա ոսկերացի:

«Մեր Պէտտալոցցուն՝ երախտագէտ

Արգա՛ումը:

Մի ուրիշ տապանագիր էլ կայ իվերդօնում Պէտտալոցցու կնոջ դերեզմանի վրայ: որ Շուլդհէյսի սղջիկն է: Այդ տապանագիրն է. «Աննա Շուլդհէյսին արժանաւոր ամուսնուն Պէտտալոցցուն, որ աղքատների բարեկամն էր, ժողովրդների բարերարն էր, մանկավարժութեան վերանորոգողն էր, 46 տարի շարունակ անձնուիրաբար պարապում էր կրթական դործով»:

Ի՛նչ աւելի գեղեցիկ նկարագիր կարելի էր տալ մի մարդու կեանքի մասին՝ քան վերոյիշեալը:

Հետեւե՛ք Պէտտալոցցու մանկավարժական դործունէութեանը և կտեսնե՛ք թէ՛ նա ի՛նչ է արել մարդկային կրթութեան համար:

Պէտտալոցցին հազիւ 6 տարեկան էր դարձել, որ նրա հայրը, ժան Բապտիստ Պէտտալոցցին, որ հմուտ ակնաբոյժ էր՝ վախճանուեց: Այս հանգամանքն առանց հետեւանքի չմնաց նրա առաջադիմութեան համար, որովհետեւ նրա գերդաստանը հարուստ չէր: Երիտասարդ Հէյնրիխն այդ ժամանակից սկսած տեսնում էր թէ որքան նրա մայրը նուիրուած էր իր գերդաստանին, որին մի օրինակելի աղախին — հաւատարիմ Բարլէն անձնուիրաբար օգնում էր: Գտնուելով ամենադժուար հանգամանքներում և պահպանելով իր հասարակական դրութիւնը, Հէյնրիխ մայրը հոգում էր իր երկու զաւակների մասին: Պէտտալոցցին պահպանեց իր անձնուրաց և քաղցրաբարոյ մօր համար անջնջելի յիշատակ, որ նրա համար մի տեսակ դադափար դարձաւ կրթութեան գործում: Ինչպէս մայրը գործում էր իր շրջանում, Հէյնրիխը կամենում էր յետոյ այդպէս գործել մարդկութեան բարօրութեան համար: Բայց ո՞րպիսի հիասթափումն էր սպասում նրան աշխարհում: Աշխարհը չտուեց նրան ներքին զգացումներին ոչ մի բաւարարութիւն:

Նա զգայուն բնաւորութեան տէր էր և երեակայութիւնը վառ, այդ պատճառով էլ պէտք է հանդիպէր ախուր և դառն իրականութեանը:

Արձակուրդների ժամանակ երիտասարդ Հէյնրիխը լինում էր իր պապ Անդրէ Պէտտալոցցու մօտ, որ պաստօր էր Հօնդում: Յիւրիսի մօտ, Հէյնրիխի բարեսրտութիւնը առատ պաշար էր զանում այդ եկեղեցականի տանն, ուր կարելի էր տեսնել միայն անձնուիրութիւն և այնպիսի սերմեր, որոնք նշանակուած էին տալ ամենագեղեցիկ պտուղներ:

Ձարմանալի չպէտք է թուի, որ հետեւելով այդ աստուածապաշտ պաստօրին՝ նա սկզբում մտածեց հոգեւորական դառնալ:

Պէտտալոցցին ուսանող դառնալով պէտք է հրապուրուէր այն ժամանակուայ ուղղութեամբ: Այդ միջոցին պրօֆէսօրներից շատերը մեծ փայլ էին դրում «մարդկութեան ընկերութեան» (collegum humanitatis) վրայ: Իրանք ձգտում էին վերադարձնել իրենց համաքաղաքացւոց դէպի հասարակ կենցաղավարութիւնը, մօտեցնել բնութեանը (Ուսսօ), ներշնչել անկախութեան հետ իսկական և ազնիւ սէր, դէպի բարին: Պէտտալոցցին դանդաղելով այդ բոլոր ազդեցութիւնների տակ՝ շարունակում էր ուսումնասիրել աստուածաբանութիւնը, բայց քարոզի առաջին փորձում անյաջողութեան հանդիպելով (քարոզելիս ծիծաղել էր) հրաժարուեց հոգեւոր պաշտօնից և մտածեց իրաւաբանութիւն ուսանել, որպէս զի կարողանայ ուղղել այն ժամանակուայ հասարակութեան սարսափելի մոլորութիւնները և չարագործութիւնները: Նա բորբոքուած էր ազդասիրութեամբ, բայց իրաւաբանական ասպարէզը շուտով փակուեց նրա համար, որ ուղղած էր ինքը ժողովրդի օգտին և ենթարկեց նրան այն ժամանակուան ազնուապետական ուժեղ կառավարութեան բոլոր խստութիւններին: Այդ պատճառով նա մտածեց ուսումնասիրել երկրագործութիւնը, որի վրայ մեծ ջանք գործ դրեց: Այս գործում նա գտնուում էր Ռուսօյի գաղափարների ներգործութեան

տակորոնք ընդունուած և ջերմ առաջարկուած էին պրօֆէսօրներէ կողմից: Երկրագործութիւնը որպէս մասնագիտութիւն ընտրելու նպատակն էր ծառայել հասարակութեանը և օգտաւէտ լինել իր համաքաղաքացւոց: Մացանկանում էր կատարելագործել երկրագործական միջոցները և ներմուծել հողի նոր ձևի մշակութիւն: Մա զնաց յայտնի երկրագործ՝ Պիֆէլիի մօտ, որ բնակուում էր Քիրլսթէրգում՝ Բէրնի մօտ և վերջացնելով իր գործն այդ ուսումնականի մօտ, զնեց Արքա՛ու կանտօնում Բիրֆէլդի մօտ մի հող, ուր և հիմնեց իւր Մոյհօֆ անուանուած կալուածքը: Իր ապագայի մասին գեղեցիկ ծրագիր կազմելով՝ նա ամուսնացաւ Աննա Հուլդհէյսի հետ, որ երկար տարիներ շարունակ լինելու էր նրա հաւատարիմ ընկերը: Որպէս երկրագործութեան վերանորոգիչ, համաձայն իր գիրքին և այդ ձեռնարկութեանը պէտք է օրինակելի դառնար իր համաքաղաքացւոց բարօրութեան համար:

Պէստալօցցու նախագծերը տարաբաղդաբար ձախորդութիւններէ են՝ հանդիպում և նա ընկնում է պարտքի տակ ու մնում իւր կալուածքում համարեա առանց մի կտոր հացի: Հէնց այդ ժամանակն է լինում (1775 թ.), որ նա Մոյհօֆում բացում է իր մանկավարժական հիմնարկութիւնը: Երջակայքից ժողովում է այդ տեղ աղքատ երեխաներ, սկսում է նրանց կրթել, աշխատանքի սովորցնել և զարգացնել նրանց բարոյական ընդունակութիւնները: Պէստալօցցին անդադար աշխատում էր: Մոյհօֆը թէ ուսումնարան էր և թէ գործարան՝ առանց ծրագրի: Այդ տեղ մանուկներն և կառավարի թելերը պարպում էին հողագործութեամբ և այլն:

Չընայելով որ Պէստալօցցին իր բոլոր ուշադրութիւնն լարել էր այդ հիմնարկութեան վրայ և իր բարեկամներին և մասնաւոր օգնութիւն էր ստանում, այնուամենայնիւ նրա գործերը յաջող ընթացք չունեցան: Այդ միջոցին Պէստալօցցին մի առանձին աշխուժով պարապում էր իր որդու—Մակորլիի սկզբնա-

կան կրթութեամբ: Մա կամենում էր, որ իր որդու դաստիարակութիւնը կատարուի կարևոր աղատութեամբ: Ինքն իրեն առանց մի որ և է ծանրաբեռնութեան:

Այս տեղ երևան է գայիս Պէստալօցցու մանկավարժութեան ամենաբեղմնաւոր դադափարը, որ վճռական յաղթութիւն էր գործելու մանկավարժական հին եղանակների (մէտոդ) վրայ:

Պէստալօցցին ասում է, զիտութիւնովդ մի՛ ծանրաբեռնի երեխայիդ, բայց աշխատիւր, որ նա ինքն իր խելքով ճանաչի ճշմարտութիւնը, յաճախակի ցոյց տուր նրան այն առարկաները, որոնք կարող են նրան ուսուցանել, զարգացնել: Երեխայիդ ձեռքից բռնած առաջնորդիր նրան դէպի բնութեան մեծ դաշտավայրը և յետոյ ճշտութեամբ ապացուցիր՝ թէ բնութիւնն է, որ ուսուցանում է նրան, որ դու քո արուեստով նրա աշակերտն ես լինելու:

Այս գաղափարն արտայայտուում է Պէստալօցցու բազմաթիւ գրուածքների մէջ բազմազան կերպով, որոնց մէջ մի շատ նշանաւոր նկատողութիւն է անում, այն է՝ որ կրթութիւնը պէտք է կատարուի կանոնաւորութեամբ, ճշմարտութեամբ և կատարեալ կերպով:

Պէստալօցցու որդի Մակորլին, որ ծնուել էր 1770 թ. վախճանուեց 1797 թ. Թոռնելով մի զաւակ, որի անունն էր Գօտլիբ, որ զնդապէտ Պէստալօցցու հայրն է: Այս վերջինը Յիւրիխի պօլետեխնիքումս պրօֆէսօրն է:

Մոյհօֆի գործն անյաջողութեան պատահելով, Պէստալօցցին իր բարեկամների խորհրդով սկսեց պարապել գրականութեամբ և իր մանկավարժութեանը վերաբերեալ գաղափարները գրի վերածել: Մա գրեց «Պնաւորի երեկոյ», «Լինհարդ և Կերտուրու», Այս վերջինը մի գերգաստանի և մի դիւղաքաղաքի բարգաւաճման պատմութիւն է: Այդ տեղ երևում է թէ ի՛նչ կարող է անել մի գերգաստանի մայր և թէ ի՛նչ կարող են անել մի քաղաքի խելացի կառավարիչներ եկեղեցու և ուսումնարանի օգնութեամբ: Այդ գրքում

բարոյականութեան գեղեցկութիւնը երևում է խիստ որոշ կերպով և մեծ հրապուրքով: Այդ գիրքը մեծ թնդիւն հանեց ամբողջ աշխարհում: Բայց նրա միւս գրուածքները յայտնուեցին համարեայ աննշան կերպով:

Ստանալով Նոյհօֆում «աղքատների փրկիչ» տիտղոսը, նա արժանի է, որ նրան անուանէին Նոյնպէս Ստանցի որբերի հայր:

Շտապիէրի առաջարկութեամբ 1798 թ. դեկտեմբերին Պէստալոցցուն հրաւիրեցին կառավարելու այն որբանոցը, որ հիմնել էին Ունտէրվալտէնում: Եր գեներալ Շառլէնբուրգը ղէկքի ուժով հպատակեցրեց: Այդ տեղ Պէստալոցցին մեծ ջանք գործ դնելով աշխատեց 7—8 ամիս և կարողացաւ այդ որբանոցը հասցնել յաջող դրութեան: Բայց 1799 թ. ուին յունիսին այդ որբանոցի շէնքը դարձրին հիւանդանոց ֆրանսիացիների երկրորդ արշաւանքի պատճառով: Այդ ժամանակ Պէստալոցցին շատ աշխատելուց հիւանդանալով՝ գնաց Գուերնիժէլ իր առողջութիւնը վերականգնելու համար:

Նրա փորձառութիւնը Ստանցում կարելի է հետեւեալ կերպով համառօտել. —

1. Ամենայն տեսակ դիտնական բարոյական և կրօնական տեղեկութիւնները պէտք է հիմնուած լինին դիտողութեան վրայ:

2. Ուսումը պէտք է համապատասխան լինի երեխայի ոյժերին: Երպէս զի նա կարողանայ զարգանալ:

3. Ուսման եղանակն այն աստիճան պէտք է հեշտ լինի, որ ամեն մի մայր կարողանայ գործադրել:

4. Կարգի և ճշմարտութեամբ գործ կատարելու կարեւորութիւնը, որ նա սկզբում առաջարկել էր՝ հաստատուում են փորձերով:

Փոփոխ (mutuele) և զանազան եղանակներով ուսուցանելը, որոնք կարող են մանկավարժութեան փորձառութեանը ծառայել, նա գործադրել էր, որ մասամբ ծանօթացնում է Պէստալոցցու մանկավարժական եղանակների հետ:

Պէստալոցցուն կարելի է անուանել Բէրտ-

ուի ժողովրդական ուսումնարանի հիմնադիր: Այդ քաղաքը զալով՝ նա ինդրեց թողլ տալ իրեն դասեր տալու մի սկզբնական ուսումնարանում: Սկզբում նրան մերժեցին, յետոյ մի ուսումնարանում մի քանի դաս տուին:

Վերջապէս յանձնեցին նրան ժողովրդական ուսումնարանի պատրաստական դաստառներ, ուր կային մինչև 8 տարեկան երեխաներ: Իր զործունէութեան համար շուտով վարչութիւնից մի շնորհակալութեան թուղթ ստացաւ: Ութն ամիս հազիւ անցած՝ Պէստալոցցին Բէրտուի ուսումնարանի յանձնաժողովից մի նամակ ստացաւ, որի մէջ դովարանուելով նրա մանկավարժական եղանակը՝ հրաւիրում էին նրան այդ քաղաքի երկրորդ ուսումնարանի համար ուսուցիչ, ուր 8—15 տարեկան աշակերտներ կային: Թեւ և նա ամեն կերպ աշխատում էր փորձառութեան ենթարկելով գործադրել իր մանկավարժական եղանակները (մէթօդ), բայց այդ տեղ էլ նրա աշխատանքը անյաջող ելք ունեցաւ: Նրա աշակերտից մէկը, որ 10 տարեկան էր՝ զարմանալի գոյներով է նկարագրում այդ ուսումնարանը:

Պէտք է ասել, որ գործնական վարժութիւնները կատարուում էին ամենահասարակ կերպով և Պէստալոցցին արդէն այն ժամանակ թուերի ձևերի հետ լեզուն էր կցում: Եր նրա կարծիքով կաղմում էին կրթութեան ամբողջ նիւթը: Իսկ միւս ուսմունքները նա անկախ բաներ չէր համարում: այսպէս զոր օր, թուերի հետ կցում էր նա հաշուելը, ձևերի հետ՝ երկրաչափութիւն, նկարչութիւնը, իսկ առ հասարակ ամենայն տեսակ միտք պէտք է շուտով արտայայտուէր:

Փոքր ինչ յետոյ, զանազան հանգամանքների պատճառով, որ պատմելու կարեւորութիւն չկայ այս տեղ՝ Պէստալոցցին հաստատուել էր Բէրտու ամրոցում, որպէս ուսումնարանի տեսուչ և ունէր շատ աշխատակիցներ: Այդ տեղ կառավարութիւնը հովանաւորում և օգնում էր նրան: Այդ ուսումնարանը, որ հետզհետեւ ուսուցչաց դպրոցի ձև ստացաւ, իր գործնական բաժանմունքն ունէր: Այդ տեղ

ՇԱՐԿԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Բ.

Ս Ա Ղ Մ Ո Ս .



նարերգու Ղաւիթ
մարգարէի աստուա-
ծահաճոյ գործերի
Տիրոջ անունով և
նորա անուան փա-
ռաց համար մղած
պատերազմների, ո-

րոց մէջ ցոյց տուած անպարտելի քաջութեանց
և խորայեղեան ապերախտ ազգին մատուցած
ամրիժ ծառայութիւնների պատմութիւնը ե-
թէ պէտք է որոնել Սուրբ Գրքի ԽՈՒՄԱՆՈՒԹԻՒՆ
ԳՐԵՐԻ գրքերի գեղեցիկ էջերի մէջ, այս հո-
գեխօս մարգարէի առ յաւիտեական թաղա-
ւորն ունեցած անքակտելի սիրոյ, երկեղա-
ծութեան, հնազանդութեան և ճշմարիտ հա-
ւատքի պատմութիւնն ևս պէտք է տեսնել իւր
ոգեգրած ՍԱՂՄՈՍԻ մէջ, մի գիրք, որի մէջ բա-
րեհամբոյր մարգարէն կարծես թէ չէ ցանկա-
ցել որ ի տես Աստուծոյ դուռն լինին միայն
իւր անձի դժբաղտութիւնները, անիրաւ բա-
նի համար՝ իւր սրտի յուզմունքները, իւր հո-
գեւոր և մարմնաւոր պէտքերը, իւր երկնաւոր
ակնկալութիւնները, և միանգամայն իւր մարդ-
կային կամայ և ակամայ սխալանքները, այլ և
այն անձինքներինն ևս, որոնք իւր նման ծա-
րաւ սրտով աստուածային ոգորմութեան, շը-
նորհաց, խնամոց և մխիթարութեան մշտա-
պէս պէտք և կարօտութիւն ունին։ Մի գիրք,
որի սրբութեան զօրութիւնը ինքն՝ Քնարեր-
գուն, առաջին անգամ փորձեց այսահար Սա-
ւուղի վերայ, և նրա դիւր և ամենազօր բա-
նիւն առժամայն տկարացնելով նրան լկող
թշնամու աննահանջելի զօրութիւնը, ևս և
առժամայն սանձահարելով և թշուառ արքա-

Պէտաւոյցցու աշխատակիցներն էին, կրիւսին
Ապէնցէլը, Տօրէրը, Բուսը, Նաէթը, Դրանք
բոլորն էլ մանկավարժական եղանակները կա-
տարեւրագործելու համար աշխոյժով աշխա-
տում էին։ Պէտաւոյցցին իր մանկավարժական
ընդհանուր հայեցակէտը հետեւյ կերպով է
ձեւակերպում իր գրուածքում։—մարդկային
բնութեան զարգացումը ենթարկուած է բնա-
կան օրէնքներին, որոնց հետ կանոնաւոր գաս-
տիարակութիւնը պէտք է համերաշխութեամբ
ընթանայ։ Ահա նրա գաղափարն է ից մի քա-
նիսը։—

1. Բնութիւնը միաժամանակ չէ զարգաց-
նում մեր բոլոր ընդունակութիւնները։

2. Այդ զարգացումը հեռեւաբար է և ծա-
նրրընթաց ու միշտ բնաւորութեան անհաստա-
կան գործն է։

3. Վարժութիւնը կրթութեան ամենամեծ
միջոցն է։ Բնութիւնը կրթում, վարժում է
մեր ընդունակութիւնները այն բաներով, ո-
րոնց նա շարունակաբար ընդարձակում է մեր
բնութիւնը։

4. Կրթութեան գործը հիմնուելով կանո-
նաւոր վարժութիւնների վրայ, կառաջացնի
մարդկային բոլոր ընդունակութիւնների ներ-
դաշնակ, ազատ, առաջադէմ զարգացումը։

1804 թ. Բէրլին կառավարութիւնն առաւ
Պէտաւոյցցուց՝ Բէրտու ամրոցը ուր հիմնեցին
մի ապաստանարան, իսկ Պէտաւոյցցուն Միւն-
խէնբուքսում մի հին վանք յանձնեցին նոր
ուսումնարան հիմնելու։

1805 թ. Պէտաւոյցցին հրաւեր ստացաւ
Խվերգօնից և չը կարողանալով մաքառել եր-
կաթի կամքի տէր Ֆելքէնբէրգի հետ՝ որ իւր
աշխատակիցներից մէկն էր, զնաց Խվերգօն,
ուր նրան հետեւեցին Միւնխէնբուքսի ուսու-
ցիչները և աշակերտներ։ Դրանք բոլորն էլ
տեղաւորուեցին Խվերգօն ամրոցում, որ քա-
ղաքը յանձնել էր Պէտաւոյցցուն։

(Շարունակելի)

Բ. Լ. ԵՒՈՒՆ ՏԻԳՐԱՆԵԱՆ.

